նակը շարժում է ամենաթոյլ դիմադրութեան կողմը»։

Զօր. Ուօկկեր.— «Մի՞թէ վարչապետը ենթադրում է, որ թոյլ կողմ կը լինի այն կողմը, ուր կը դտնուի անգլիական ոյժը»։

Ժորտանիա.— «Ի հարկէ, ոչ, բայց հէնց որ ամենափոքր առիթը ներկայանայ, նրանք առաջ կը շարժուին՝ խաբելով ձեզ»։

Զօր. Ուօկկեր.— «Ես այժմ չգիտեմ, թէ ի՞նչ քանակութիւն կարող եմ դնել ենթադրուող վայրերում, բայց կարծում եմ, որ եթէ Դենիկինները թոյլ տան իրենց դնալու անգլիական զօրքերի նոյնիսկ ամենատկուսաթիւ մասերի դէմ, այդ կը լինի պատերազմի յայտարարութիւն Մեծ-Բրիտանիայի դէմ»։

Ժորտանիա.— «Այդ շատ կարեւոր հարց է, եւ ձեր առաջարկը մենք կը քննենք, որովհետեւ վրաց կառավարութիւնը վճռական կերպով որոշել է ուժով հարկադրել նրանց, որ թողնեն Վրաստանի սահմանները, եւ ես պէտք է հաղորդեմ ձեզ ի դիտութիւն, որ մեզ հետաքրքրում է միայն Վրաստանի պատմական սահմանը, եւ ես նորէն կրկնում եմ, որ մենք ոչ մի յաւակնութիւն չունինք Սոչիի շրջանի վրայ»։

Զօր. Ուօկկեր.— «Այն ժամանակ ձեր բոլոր քայլերը կը լինին ձեր պատասխանատուութեամբ»։

Ժորտանիա.— «Ո՛չ, մենք չենք առնի մեր վրայ այդ պատասխանատուութիւնը, որովհետեւ մեզ առաջ հաւատացրին, որ կամաւորական բանակի կողմից ոչ մի յարձակողական շարժումներ չեն լինի։ Վրաց կառավարութիւնը, հաւատալով այդ յայտարարութեան, յետ քաշեց իր զօրքերը, եւ դրա հետեւանքը եղաւ Դենիկինի յարձակումը»։

Զօր. Ուօկկեր.— «Այդ դէպքում ես պէտք է յայտնեմ, որ եթէ Վրաստանն այժմ չկամենայ ընդունել Անգլիայի միջնորդութիւնը, ապագայում ես կը հրաժարուեմ դրանից։ Ես պէտք է հաղորդեմ վարչապետին, որ իմ տեղեկութիւններով վրաց ուժերը Սոչիի շրջանում թուլացուած չեն»։

Ժորտանիա.— «Մենք, ի հարկէ, ընդունում ենք Անգլիայի միջնորդութիւնը եւ հաւատում ենք, որ Մեծ-Բրիտանիան այս հարցում մեզ դոհացում կը տայ, բայց ես պէտք է յայտնեմ զօր. Ուօկկերին, որ նա սխալւում է մեր ուժերի տկարացման մասին Սոչիի շրջանում։ Վրաստանի կառավարութիւնը զօրքերը յետ է քաշել 10 վերստով եւ այս հրամանը անմիջապէս կատարուած է մեր հրամանատարութեան կողմից։ Մինչեւ վերջին պահերը զօր. Կոնիեւը Թիֆլիսում էր եւ միայն պատահաբար, կամաւորականների յարձակման սկզբին դտնուեց Սոչիում»։

Զօր. Ուօկկեր.— «Ես կարող եմ ձեզ վստահացնել, որ տուեալ շրջանում դրութիւնը միշտ այսպէս չի լինի, բայց, ի մեծ բժբախտութիւն, հիմա ես աւելին չեմ կարող անել։ Կրկնում եմ, այս հարցի լուծումը Պոլսի հրամանատարութեան գործն է եւ մինչեւ հակառակ կողմից տեղեկութիւններ ստացուելը ես չեմ կարող ասել ձեզ, թէ ի՞նչ առաջարկութիւններ պիտի անեմ բարձր հրամանատարութեան»։

«Այժմ ես պէտք է անցնեմ այնպիսի հարցերի, որոնք համարում եմ անախորժ բաներ, այսինքն՝ վրաց կառավարութեան պաշտօնական բողոքին դնդ. Գեղեւանովի միջադէպի առթիւ։ Ես չեմ կարողանում հասկանալ, ինչո՞վ է բացատրւում այն ամէնը, որ պատահեց։ Ես կը կարդամ վարչապետին Բաթումի ընդհանուր նահանգապետի բացատրութիւնները, բայց դրանից առաջ ուզում եմ ասել մի քանի խօսք։ Վրաստանի արտաքին գործոց նախարարը մի քիչ խիստ նամակ էր ուղարկել իմ անունով. նրա մէջ խօսւում էր դնդ. Գեղեւանովի միջադէպի մասին։ Այդ նամակը ես ուղարկել եմ Բաթումի ընդհանուր նահանգապետին, եւ նա, ի հարկէ, կ՚ուղարկէ ըստ էութեան պատասխան։ Քանի ես պատասխան չեմ ստացել, ինձ թւում է, դրա մասին չարժէր դրել։ Այս դէպքում ես բողոքում եմ եւ յայտարարում, որ այսպիսի վարքագիծը չի բարեւալի իրերի դրութիւնը։ Նախ քան Բաթումի ընդհանուր նահանգապետի նամակի ընթերցումը, ես կ՚ուզէի լսել պատասխանը՝ ինչի՞ց է առաջ եկել այդ ամէնը»։

Ժորտանիա.— «Ձեր բանակցութեան միջոցին, զօրավար, այստեղ կատարուել են որոշ փոփոխութիւններ, որի մասին այս բոպէ-